ՍԱՍՆԱ ԾՌԵՐ*

Խաբար գնաց Կաղզվան։
Էդտեխ Վաչո-Մաչո կային.
Ըդոց մե Խանդութ անվոր ախճիգ կար,
Պարսկաստանի շայի աղի հեդ նշանուգ էր։
Լսեր էր Դավիթի ձեն։
Ըգոր էլ՝ նստած է յօդեն տաս-տասնմեգ հոքի,
Գը խմին ըդոր կենաց, թե՝
Բրլքեմսի մեգն ու մեգին հավնի։
Մեգիմ լե չը հավնավ։
Կանչեց մեր Մարդիրոսի[74] պես աշըղ մի.
1020 — Արի՛,— ըսավ,— ի՞նչ տամ, օր դու էրտաս Սասուն,
Ընձի գովաս։
Ըսավ.— Ի՞նչ դովամ։
— Աշը՛ղ իս,— ըսավ,— չըս գինա՞,
Քու տունը քանդվի՛,— ըսավ,— էրտաս, գովաս ընձի։
Ըսավ.— Չէ՛։
Ըսավ.— Քըզի ինչ օր կառնիս՝ մեգին յոթ կիդամ,
Կէրտաս Սասուն, կըսիս.
— Իմ Խանդուդի բոյն՝ ինչ օր ծառն ի չինարին,
Իմ Խանդուդ՝ ինչ օր խնձոր ծերն ի ծառին,
1030 Իմ Խանդուդ՝ ինչ օր բամբաղ գզիս ու դիզիս։
Մե յոթ դիր տվեց ըսել՝ սովրավ։
Յելավ թոփալ էշ մի հեձավ
Ու էգավ գնաց Սասուն։

Գնաց Սասուն։ Գնաց, ուրանք շագրցած է.
Օր մըդավ գեղի մեջ, քեռի Թորոս նստուգ էր բինագդաշի[75] վրեն.
Բարեվ տվեց, բարեվ առավ։
Սաղ կար մոդըն,
Սասունա էրեխեն, բացի սաղի՛ց, մարդ չը տեսեր է,
Էշ՝ մարդ հեձուգ,
1040 Էրեխեք՝ մեգ կը բզե, մեգ կը քաշե։
Քեռին տեսավ, օր բդի էդ է՝ խեխտըլգան,
Յելավ գնաց, էրեխեստանուն դեն քշեց, բերեց.
— Ի՞նչ մարդ իս։
Ըսավ.— Աշը՛ղ իմ։
— Դե՛,— ըսավ,— աշըղ ջա՛ն, օր աշըղ իս,

* Սկիզբը տե՛ս «Լրաբեր», 1973, № 7։

74 Վիպասացի համագյուղացի աշուղ։ 75 Դարպասի առչև դրված քար, խնամաքար։

Կգոր մի,— ըսավ,— սազ զա՛րգ,
Թը՛խ էդ էրեխեք քըզնից հեռենան, չտես ին։
Բերեց սազ. մեր Մելոյի Յակորի[76] պես,
Մե քանիմ՝ դիր օր չալեց, սկսեց.
1050 — Իմ Խանդուդի բոյ՝ ինչ օր ծառն ի չինարի,
Իմ Խանդուդ՝ ինչ օր խնձոր ծերն ի ծառին,
Իմ Խանդուդ՝ ինչ օր բամբաղ դզիս ու դիզիս։
— Տղա՛,— ըսավ,— զարգե՛ք,
Էգեր է, խաբե, տզին գը տանե։
Լավ մե շառտեցին,
Բերեցին կաբեցին իշու վրեն ու դառուցին,
Էշ գնաց։

Էգավ ճամպու հեգ։
«Ա՛յ մարդ,— իրեն, իրեն մդաձեց,— ես ի՞նչ ըսեցի.
1060 Ես ըսի.
— Իմ Խանդուդ՝ ինչ օր խնձոր ծերն ի ծառին,
Իմ Խանդուդ, ինչ օր բոյն ծառն ի չինարին,
Իմ Խանդուդ՝ ինչ օր բամբաղ գզիս ու դիզիս։
Դավիթ յեդեվեն լսեց.
— Հա՛,— ըսավ,— կայնի՛, աշո՛ւղ։
Ըսավ.— Իմկընի Սասման ծո՛ւռ,— ըսավ,—
Գացի ձըր գեղ, ընձի ըսպանեցին,
Դու լե բդի հիմա քաշիս գլուխս կդրիս։
Ըսավ.— Յընչի՞։ Իդ ի՞նչ բան է։
1070 Ըսավ.—Ես աշը՛ղ իմ։
— Ըբը,— ըսավ,— քըզի ինչի՞ ծեձին։
Ըսավ.— Գացի ընտեխ խաղ ըսի։
— Հըլը՛, էդ խաղ,— ըսավ,— ես էլ...
— Չէ՛,— ըսավ,— չը՛մ ըսի, ընձի կըսպանիս։
— Չէ՛,— ըսավ,— ես չեմ ըսպանի,
Աղոթք գինամ, աղոթք կէնիմ,
Իդա քու վիզ լե շիդգի։
Յինքն էլ տեսավ, օր պադմաձից ու ըռըշից՝ Դավիթն է։
Դավիթն էլ քաշեց վիզ շիդգեց։
1080 Սկսեց. սկսեց գովալ։
— Լա՛վ,—ըսավ,— դու քանի՞ օր կէրթաս։
Ըսավ.— Յոթ օր կէրթամ։
— Ո՛ր օր գացիր, կըսիս,
Օր էդ օր ես ուր խոնախն իմ։
Աշըղին ճամպու դրեց, գնաց։

Յինք պդրդավ, խոսք տվաձ օրը, յառավոդ յելավ,
Թիմբրեց Քուռգի Ջալաղ, կերցուց,
Հակավ ու յելավ հեձավ։
Հեձավ, էգավ յիջավ Մշու դաշտ։

76 Վիպասացի համագյուղացի, խաստուրցի հայտնի աշուղ։

1090 Ցիշավ Մշու դաշտ, տեսավ օր՝
Ամառ ը, յոթ լուռ գմեշ լեռած ը գութան,
Վա՜ր կէնին։
Գնաց հասավ, ըսեց.— Բարե՛վ ձեզ։
— Ասսո՛ւ բարին։
Ըսավ.— Էս ի՞նչ կէնիք։
— Վա՜ր կէնինք, գութա՜ն կէնինք, հե՛րկ կէնինք։
— Տո՛,— ըսավ,— էս է, ա՛յ մարդ, յոթ լուռ անջա՛ղ։
Ըսավ.— Մգա բդի ըսիս, թե ես էլ քաշի՞մ։
Ըսավ.— Հարձրգե՛ք,— ըսավ,— ես քաշի՛մ։
1100 Հարձրգեցին դոմշրդան, է՛, գիշխընա՞ն[77] չը հարձրգին։
Բերեց լուռ վերուց, դրեց այարի մոդ, յօդներուն
Ու ձիուն թողեց։
Քաշեց մե փաթ մի, մե հոգաղ.
— Հա՛,— ըսավ,— Քուռգի Ջալաղ քաշե,
Ցինք գինա, թե ուր շնորքն է։
Վերցուց ձին թողեց, կանգրցուց,
Բռնեց բնադից[78] ու սկսեց քաշել։
Քաշեց, օր քրդնավ՝ հերսոդավ,
Հերս յելավ, բռնեց օլրեց, թալեց...
1110 Մգա դեռ ընդոր սամու կգորգանք յերգընքուց գիկա։

Քշեց, գնաց հասավ Կաղզվան։
Գնաց Կաղզվան, Խանդուդ բադնի վրեն կը պդրդեր։
Գնաց.— Գորգի՛կ դռընպահ,— ըսավ,— արի՛, ձիս քաշե՛։
Ցին քաշեցին տարան։
Գնաց տեսավ, օր տաս-տասնմեգ հոգի նստած է, գը խմեն։
Ըդոք օր Դավիթին տեսան.
— Է՛,— ըսին,— Խանդուդ ըդոր տեսավ,
Մըղի ինչի՞ կառնե։
Մեգ-մեգի խդելով[79], յելան դուս, խորսրտ էրին.
1120 — Արե՛ք,— ըսավ,— Դավիթին ըսպանինք,
Որիս օր առավ, թող մեգելներ լե էղնին հարսնավոր։
Խորուրտ էրին, էգան, նստան։
Էն տասը տվեցին Դավիթին, տասը տվեց ըդոց.
Դավիթին խմցուցին։
Էն ժամանագն օր կը կղեր,
Տասն էլ թրեր կը քաշեն,
Ծր կը շիդգեր՝ քշեն թաղքներու տագ։

Քեռի Թորոս տեսավ՝ չէգավ, յուշացավ։
Որմ թալեց, քաշեց թուր.
1130 — Ախէի՛,— ըսավ,— իմ Վեցօղնեն Լագզին քաշե՛ք,
Տղեն նեղության մեջ է։
Էդ քոպագօղլին ըռաստ է էգի, խապի, տարեր է։

---

77 Իշխանել—համարձակվել։ 78 Գութանի հաստ շղթա։ 79 Հրել, բզել։

Քաշեցին Վեցօղնեն Լագզին, հեծավ, էգավ։
Էգավ, գիշեր է, հասավ Կաղզվան։
Դուռ զարդեց՝ Գորգիկ դռնպահ քնուդ է.
— Գորգի՛կ դռնպահ,— ըսավ,— դո՛ւռ բաց,
Գորգի՛կ դռնպահ, դո՛ւռ բաց,
Գորգի՛կ դռնպահ, դո՛ւռ բաց,
Երրորդին նոր յիմցավ։
1140 — Ասսո՛ւ բարին, ասսո՛ւ բարին, ասսո՛ւ բարին,
Քեռի՛ Թորոս։
Ըսավ.— Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,
Իրեք դիր յիմ ասսու անուն չիգեր՝
Գլուխտի կը կգրենք։
Ըսավ.— Դավիթ յո՞ւր է։
Ըսավ.— Տիա՛, էս յոդեն կը խմին։
Էգավ, դուռ բացեց, տեսավ օր՝ ի՞նչ տեսնի.
Որ ժամանագն օր կը կգի՝
Տասն էլ թրեր կը քաշին.
1150 Որ ժամանագն օր կը շիդգի՝
Տասն էլ թրեր կը դնին կուլրի[80] տագ։
Աշեց, մեգ էլ՝ կզած վախտ, օր կզավ,
Մե չրբուխ մի բոյեն քաշեց,
Շաբուխտե[81] մի օր զարդեց.
— Քեռի՛,— ըսավ։
— Իմկընի Սասման ծո՛ւռ,— ըսավ,— նստեր իս,
Քու դուշմաններու մեջ կերուխում կէնի՞ս։
— Տո՛ իմա՞լ դուշման...
Ըսավ.— Հըլա թաղքներ վերցո՛ւ։
1160 Ըսավ.— Կռնագդի տո՛ւ դռան։
Կռնագ տվեց դռան, թաղքներ վերցին,
Տեսավ օր՝ ամեգու մեջ՝ մե թուր մի։
Բռնեց, տասի գլուխ էլ կդրեց
Ու փանջարից թալեց էդ վերեվն, օր խանդուդ կարբեր,
Ու բերեց թրերն էլ քամեց յիրար, կոդրեց։
— Քեռի՛ ջան, դե՛,— ըսավ,— լի՛ց մեր խուրջին,
Տանինք, մեր տեխ քարոտ է,
Կէնինք մեր ձիանուն նալ ու մրխ։

Յառավոդ լուսցավ։ Գորգիկ դռնպահին ըսավ.
1170 — Գնա՛,— ըսավ,— կանչե Վաչոյ-Մաչոյին՝ թրխ գան։
Էգան։
— Իմ հարսի,— ըսավ,— յոդ ու ձեռ տեսեք,
Ես կը տանիմ։
— Քեռի՛ Թորոս,— ըսավ,— քու գլխուն ու արեվուն մեռնի՛մ,
Ա՛խըր էդի նշանլու է շայի տգի հեդ,
Տարար՝ մեր երգիր գը քանդին, կավիրին։

80 Կուլար—թաղիքե վերարկու, այծենակաճ։ 81 Ճիպոտ։

— Ըբը ի՞նչ էնինք։
— Ես ի՞նչ գինամ, դու գինա՛ս։
— Տղա՛,— ըսավ,— էրտանք, կռվի՛նք։
1180 — էրտա՛նք, քեռի՛։
Բդի էրթեն.— Ա՛յ մարդ,— ըսավ,—
Ես ըդոր ախճիգն առանց տեսնելու...
Կարելի է՝ թոփալ է, քոռ է, քաչալ է,
Ես էրտամ ըդոր համար մեռնի՞մ։
Ըսավ.— Կանչե՛ք, էդ ախճիգ թըխ գա,
Հըլը ես տեսնա՛մ։
Դավիթն օր լսեց՝ ախճիգ բդի կանչին,
Գնաց, գողու պես մդավ մե տեխ, տապալ[82]։
Ախճիգ էդավ։ Ախճիգն օր էգավ,
1190 Ձեռ թալեց ախճգա վիզ, մեգըմ պաքեց։
Ըսավ.— Քու ճամպո՛ւ խաթըրն է։
Մեգ էլ պաքեց.
Ըսավ.— Էն էլ քո՛ւ խաթըր։
Մեգ էլ պաքեց.
Ըսավ.— Քու ասսո՛ւ խաթըր։
Մեգ 'մ էլ օր պաքեց.
Ըսավ.— Ի՛նչ լրբություն կէնիս։
Ձեռ զարդեց դոշ, դա՛րգեց պադին։
Օր զարդեց՝ գլուխ առավ պադին,
1200 Դավիթի քթեն-բերնեն արուն թալեց։
Վազավ յեդեվեն՝ ախճիգ ուրին թալեց Քեռու քով։
Թալեց Քեռու քով.
— Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,
Քըզի գուրզ մի կը թալիմ,
Դու ընձի իմ Քեռու յառեջ հըմլա խայտառագ էնի՞ս։
Էգան նստան։ Տեսավ ախճդան։
Բերեցին իրեք հադ իշու փալան զարդեցին քիթ,
Տարան Արազի վրեն լե լվացին,
Արազու կես՝ ջուրն արուն էղավ,
1210 Հազիվ կըրցան ըդոր արունը կղբեցին։
Արուն կդրեցին, մնաց մյուս օր,
Յելան հեծան, Քեռի ու եգյան գացին։

Գացին։ Գացին դեբի Պարսկաստան։
Խաբար տվին շային, թե՝
Քու հարսին զոռով էդած, կը տանին,
Էգած է, քու հեռ բդի կռվին։
Շայ ինչքան զորք խրգեց՝ ջարտեցին,
Ինչքան խրգեցին՝ ջարտեցին։
Բայց էրտըլու ժամանագ, օր գացին,
1220 Դավիթ կանչեց ախճգան.
— Խանդո՛ւդ,— ըսավ,— մենք կէրթանք,

82 Թաքնվել։

Թակավորի հեդ է կը կռվինք.
Յոթ օր օր չէգանք՝
Գիկաս, մեր էրգրսի շանդագ ջոգիս, բերիս.—
Ըսավ.— Մեր աջ թեվի վրեն Մսե խաչ կա։
Կռվան։ Յոթ օր օր թըմավ, յախտեցին, էգան։
Խանդուգ հեձի ձին, գնաց.
Գնաց յառեջ ուրանց։
Դավիթ տեսավ, օր Խանդուգ էգեր է. յերտըվեր էր,
1230 Ադադորեց[83], Քեռուց յառեջ յընգավ ու քշեց,
Օր քշեց, Խանդուգ տեսավ, դառավ, փախավ,
Յեդեվեն հասավ՝ ուրին թալեց լեռի տագ,
Կաղզըվընու տագ,
Ջարդեց նեդով՝ լեռ ճղավ, յընգավ շոշի վրեն։
Մգա դրռ հըլը էն քար ճամպու վրեն մանցեր է։
Քեռին յեդեվեն հասավ, բռնեց.
— Քեռի՛, Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,— ըսավ,—
Յերտըվեր ենք՝ մե գուրզ մի գը թալենք,
Էն էլ ուր բախտից՝ չբռնեց.—
1240 Ըսավ.— Է՛լ բան չըմ ըսի։
Առան էգան։ էգան Կաղզվան.
— Վաչո՛-Մաչո՛, մեր հարսի թադարուք[84] տե՛ս,
Մենք առնինք էրթանք։
Էդ մարդիկ յօդ ու ձեռ տեսավ ուր ախճգան,
Առավ Դավիթ Խանդուդին էգավ։

Էգան Սասուն։
Մանցին մե ժամանագ մի,
Դե՛, ադաթ կար յառեջ ախբր՝ դարձ բդի տանեն։
Էգան, Խանդուդին Վաչոն-Մաչոն դարձ տարան։
1250 Մե քանիմ՝ վախտ ընցավ, խաբարն էգավ.
Յօնի ազագվեր է, մե տղա է ունեցի,
Տղի ձեռ խըպուգ ը, չը կըռնան բանան։
Յուզեցան բանան, ըսեցին.
— Ա՛յ մարդ, կը բանաք՝ ձեռը սըխտի,— ըսավ,—
Գիկան Կաղզվան քարուքանդ կէնին։
Հա՛մ յաչքալուս խրգինք ուրանց,
Հա՛մ էլ ըսինք, օր ձեր տղի մեգ ձեռը փագ է.
Թըխ յիգան, ինչ կէնին՝ էնին։
Էգան, մուժդա բերեցին քեռի Թորոսին
1260 Ու ըսին օր՝ տղի ձեռը խպուգ է,
Չեն կըռնա բանա։
Կանչեց Դավիթին, մե աղոթք սովըրցուց,— ըսավ.
— Չէրթա՛ս ծուռ-ծուռ քամիս,— ըսավ,—
Տղի մադներ ջարդիս։
Յելավ գնաց։

83 Ճարպկորեն պահը որսալ, հաջողացնել, 84 Պատրաստություն։

Գնաց, տեսավ օր՝ հաստատ, տղի ձեռ խպուգ է։
Բերեց աղոթք էրեց, մաժմըժեց,
Տղի ձեռ բացեց տեսավ օր՝
Տղի ձեռաց մեջ լերդ արուն է,
1270 Օսկոռն էլ մեջ։
— Հե՛յ վախ, հե՛յ,— ըսավ,—
Մենք մարդ կըսպանինք,
Էսի արուն բդի խմե,— ըսավ։
Մնաց մե քանիմ՝ օր, բդի յիգեն,
Վաչո-Մաչոյի միտք խալբ է, ըսավ.
— Քառսունք թըմի՝ նոր հարսն էլ տանիք։
Էգան, բերեցին կերուխում սարքեցին,
Դավիթին սկսեցին խնդրել.
— Փեսա ջա՛ն, ախրը դու մեր փեսեն իս,
1280 Էլ մի կովի.
Կովիս, կռիվ է, օր մի կըսպանվիս,
Մեր ախճիգ կը մնա օրպեվերի։
Վերջ, շատ օր համոզեցին, ըսավ.
— Ջե՛մ կովի, ինչ կա օր։
— Ջէ՛,— ըսավ,— ըսելով չէ։
— Ըբա ի՞նչ։
Ըսավ.— Քու Սուրբ Նշանի վրեն յեբտվի՛,
Օր դու բդի չըկռվիս,
Օր մեք էլ հավաղանք, աբահով էղնինք,
1290 Օր մեր փեսեն չը կռվի,
Մեր ախճիգ էլ օրպեվերի չը մնա։
Դավիթ, որ ժամանագ օր գնաց կռվելու,
Ցելավ Բարձր Մարութա Մայր Աստվածածին,
Էդտեղ Սուրբ Նշան տվեցին,
Համբուրեց, գրեց ծոց, ծոցն էր։
Ըսավ.— Արի՛, էս քու Սուրբ Նըշնի վրեն յերտվի՛,
Օր դու բդի չըկռվիս, —ըսավ,—
Մենք էլ արխեյին էղնինք։
Բերեցին ստիպյալ, Դավիթն էլ յելավ դուրս,
1300 Գլխու սանդր դրեց աջակողմ՝ Սուրբ Նշանի տեխ,
Նշան էլ դրեց սանդրի տեխ, էգավ, ըսավ.
— Էս Սուրբ Նշան,— սանդրն է որպես,— հաստա՛տ,
Ջե՛մ կովի։
Կդորմ՝ մնաց, յելավ դուրս, ըսավ.
— Մեղք ը, Սուրբ Նշան,— ըսավ,— ձախ կողմն է։
Ցելավ տեսավ օր՝ ձեռն օր զարդեր է,
Սուրբ Նշանն էլի իր տեխն է,
Ջորս մաղի տեխն էլ սեվցեր է։
— Հե՛յ վախ, հե՛յ,— ըսավ,— էս ի՞նչ էր էղավ իմ գլուխ։
1310 Էգավ, ըսավ աներոջն ու զոնքըջին.
— Պադրաստություն տե՛ս, մենք կէրտանք։

Պադրաստություն տեսնելու... համոզեցին, թե.
— Դու չահել իք, ձրգի նորից էրեխա կէղնի,
Մենք չունինք, էս մե տղեն թողեք մրզի,
Դու յելեք գնացեք։
Տղի անուն էդտեխ կը դնե պարու անուն՝ Մհեր։
Համոզեցին, տղեն առան,
Յելան մարգ ու կնիգ հեձան ձիանք։

Քեռի Թորոս էլի ուրմ աշեց.
1320 Յերտրվեր էր յիրգուն։
— Արմաղա՜ն,— ըսավ,— տղեն յուշացավ։
Բերեց ուրմ թալեց, քաշե՜ց,
Տեսավ օր՝ թրի բերան ժանգոոդեր է։
— Քաշե՜ք իմ Վեցօղնեն Լագզին,— ըսավ,—
Տղեն նեղության մեշ է.
Կա՜մ հասնիմ, կա՜մ չ՝ասնիմ։
Քաշեցին Վեցօղնեն Լագզին,
Քեռի Թորոս հեձավ, քշեց էգավ։
Էգավ, ի՜նչ տեսնի.
1330 Տեսավ, օր Կաղզվընու ձոր, էդ ճամբախն, օր բդի յիգա,
Սելով, փեգով կդրած է։
Դավիթն ու Խանդուգն օր յելան,
Քաղաք՝ էրեխան, յօղնագնեն[85], զինվան
Ու յընգան յեդեվե ուրանց։
Աշեց տեսավ.
— Խանդո՜ւգ,— ըսավ,— էս խապի՜ն ընձի։
— Դավի՜թ,— ըսավ,— դու մի՜ վախենա,
Դու քու շորեր տո՜ւ ընձիգ,
Դու իմ շորեր հակի՜, բռնե ձին, ընտեխ կայնի՜։
1340 Խանդուգ հակավ Դավիթի շորեր, սկսեց կռվել։
Քեռի Թորոս էգավ, տեսավ օր՝ կդրած է գեդուկ[86].
Չէ՜, մզրըղով[87] թալե՜ց, թալե՜ց,
Ճամպախ մի բացեց։
Էգան էրգու դիուց, հասան,
Էրդրսով չարտեցին, էգան յիրար։
— Տղա՜,—ըսավ,— հարս յո՞ւր է։
Տեսավ՝ չըխոսա։
— Տղա՜,—ըսավ,— հարս յո՞ւր է։
Չխոսաց։ Աշեց՝ Դավիթ էնտեխ ձին բռնուգ։
1350 — էս ի՞նչ բան է։
Գնաց։—Քեռի՜— ըսավ,— ընձի խապած է.—
Ըսավ.— Ես յերտվեր իմ։
— Վա՜յ,— ըսավ, քու վի՜զը կոդրի,
Էս ի՞նչ իս էրի...
Տղեն յո՞ւր է։
Ըբը ըսավ.— Տղեն թողեցինք ընդոնց։

85 Քայլել կարողացող յուրաքանչյուր ոք։ 86 Լեռնանցք։ 87 Նիզակ։

— Ա՜յ մարդ, էս ի՞նչ իք էրի։
— Թողեր ինք։
Է՛, հըմգա կռված է, սաղ քաղաք ջառտած է...
— Վա՜յ,— ըսավ,— քու վի՛զը կոդրի,
1360 Վերջ գացին։ Ըսեցին.
— Էրտանք, փորձանք մի դ՝ էլնի։
Հնձան ուրանց ձիան, էդան։

Էգան, էգան հասան Սասուն։
Էգան Սասուն. Դավիթ կէրտեր, կը պդըդեր,
Ուր նեճրութուն կէներ։
Սովորուտյուն ուներ՝ գիշներ ցերեդներ,
Կէրտեր Մեղրագետ, կը լողգըներ։
Էդտեղ Ճրմճրմի Սուլթան կար,
Գուզեր առներ Դավիթին։
1370 Դավիթն օր գնաց առավ խանդուդին,
Էդ մարդ Դավիթի հեդ թշնամի էր,
Գըպըդըդվեր յեդեվեն,
Գուզեր, օր Դավիթին սըբաներ։
Օրերուց մեգ օր Դավիթ էգավ լողգընալու։
Տվեց Ճրմճրմի Սուլթանի ախճիդ գուրզ, նեդ ու աղեղ,
Էգավ, խամիշ կար, խամշըներու մեջ.
Դավիթն, օր կռնադ դերի ուրին էրե, կը լողգըներ,
Ցեդեվանց նեդով զարդեց։
Բռնեց սրտի մեջ, չը թողեց դուրս գեր
1380 Ու ճվաց թե.
— Ընձի զարդեցին։
Էտտեխից ձեն գնաց Սասուն.
Քեռի Թորոս ըսավ.
— Ցելե՛ք հեձեք, էրտանք։
Ցելան հեձան, էգան, տեսան օր՝
Ջրի մեջ արուն կէրտա։
— Տղա՛,— ըսավ,— ի՞նչ է։
— Քեռի՛,— ըսավ,— ընձի զարդեցին,
Բայց զարգող իմ ձինից էդ խամշըներու մեջն է,— ըսավ,—
1390 Ցերտըվեր ենք, օր մարդ բդի չը սըպանենք,
Է՛դ էլ,— ըսավ,— բռնեք բերե՛ք,
Տվե՛ք, ըդոր գլոխ կդրի՛մ,
Ես օր կը մեռնիմ։
Էգան տեսան օր՝ ախճիդ ձինից յընգեր էր,
Բռնեցին ախճգան, Դավիթին հանեցին,
Տվեցին, քաշեց ախճգա վիզ կդրեց,
Դավիթն էլ մեռավ։
Բերեցին կտրեցին ձիու վրեն դիակ,
Նաշը կը տանին։ Ըսավ.

1400 — Ջրինդ խաղցե՛ք, օր Խանդուդ չգիղենա,
Բըլքի սաղ բռնինք։
Եթե Խանդուդ էլ մեռավ, ես ծերացեր իմ,— ըսավ,—
Անձըղներ ձեր յաչքեր դ՝ հանին էս սարի գլուխ։

Յելան սկսեցին ջրինդ խաղալով՝ էգան։
Ցռան Վեջոն քշեց էգավ.
Խանդուդ բագնի վերավեն ըսավ.
— Որ ածեր՝ չէգավ, որ չածեր՝ էգավ,
Ցո՞ւր է,— ըսավ,— իմ շահ-բալաբան[88] Դավիթ չէգավ։
Ըսավ.
1410 — Քըզի պագսավ պարոն Դավիթ,
Չը պագսի՛ պարոն իրիդ։
— Վա՛յ,— ըսավ,— ք.... քու բերան, Վեջո՛,—
Ըսավ.— Դավիթի մեռնելեն դուրս
Ես առնիմ քըզի՞,—
Ուրըն բագնից քցեց։
Գլխու վրեն քցեց։
Մգա դրռ ըդոր գլխու տեխ
Մե փուդըմ կորեգ-ձավար գըլնան, կը ծեձին։
Էգան տեսան օր՝
1420 Արդեն Խանդուդն էլ էդտեխն է մեռի։
Բերեցին էրգու դիագ էրեցին մեգ,
Տարան թաղեցին։

ՓՈՔՐ ՄՀԵՐ

Մանցին։ Մե վախտ մի յընցավ, քանի տարի։
Կանչեց հոխպոր.— Ձենով Օհա՛ն,— ըսավ,—
Մհեր մեռավ, Դավիթ սըբանվավ։
Իգա սարի գլուխ,— ըսավ,— ես էլ մեձըցեր իմ,—
Ըսավ.— անձըղներ մեր յաճկեր գ՝հանին։
Արի էրտանք Կաղզվան,
1430 Ընանք, թե բիչ չէ՝
Մեր տղեն բերինք։
Ըսավ.— Էրտա՛նք։
Յելան գացին։
Գացին. ըդոք օր գացին,
Արդեն տղին տարած պայած է։
Տղին մե յոդեմ՝ կէնին, ոչ դուրս կը թողին,
Հաց, բան, ջուր՝ ըդտեխեն է,
Արե՛վ լե չը տեսնի։
Յիրգուն հարց ու փորձ.
1440 — Ըբը յո՞ւր է,— ըսավ,— մեր տղեն չէգավ։
Լացին, ծեծկըվան, թե.

88 Մեծ շահ, մեծ արքա։

— Տղեն մեռեր է, յրսօր քանի՛ օր։
Քեռին ուրմ կաշե՞՝ տղեն սաղ է,
Բայց ուրանք կըսին թե՝ մեռեր է։
— Չէ՛, —ըսավ,— իմ տղեն չը՛մեռեր է։
Ըսավ.— Մեռե՛ր է։
Ըսավ.— Իմ տղեն յոթ տարեգան է,
Իմ շաղերով կէղնի յոթ շագ[39] ընդոր ըոյ։
Մարդիկ պայեցին՝ յինք օր քելա, շագեր չափեցին,
1450 Գացին դերեզմրններ քանդեցին, փորեցին,
Բերեցին օսկըռից, փեդից-մեղից լցեցին,
Յոթը շագանոց մե գերեզման 'մ սարքեցին,
Հող ծածկեցին, էգան։
Յառավոդ յելավ գնաց, տեսավ օր՝
Ա՛յ մարդ, գերեզմանն ուր ըսած գերեզմա՛ն է,
Բայց քեռին ուրմ կաշե՞՝ տղեն սա՛ղ է։
— Ա՛յ մարդ,— ըսավ,— իմ տղեն տա՛ղ է։
Գիլան, թե մեռեր է։
Զինով Օհան ըսավ.— Քանդե՛,— ըսավ,— էս գերեզման։
1460 Ա՛յ մարդ, գերեզման էլ քանդե՞ն, խաչուգ ը, կնքուգ ը։
— Քանդե՛,— ըսավ,— քանդե՛։
Քանդեց, տեսավ՝ ըիրադի օսկոռ։
Ի՞նչ էրեցին՝ տղեն չը տվին։
Չը տվեցին, յինք էլ մենագ էր, ծեր էր,
Վախեցավ, ըսավ.— Ցելի՛,
Ցելի էրտանք քաղքից խրաղ, իրեք դիր բոռա,
Թե մեր տղեն ը, գիկա,
Թե օր բիջ է,— ըսավ,— տանինք ի՞նչ էնինք։
Ցելան էգան քաղքից խրաղ,
1470 Բոռաց Զինով Օհան.
— Սասունցի Դավիթի տղա Մհեր յո՞ւր է, թող գա՛,
Ուր Քեռին ու հոխպեր էգած է ուր յեդեվեն։
Յառաջի անգամ օր բոռացին,
Բերեցին հաց դրեցին յառեջ,
Կերավ, օսկոռ կար մեջ։
Երգրորդ անգամ ճվաց հոխպեր.
— Սասունցի Դավիթի, Խանդուդի տղեն յո՞ւր ը,
Թող յելնի գա,
Ուր Քեռի Թորոսն ու հոխպեր էգած է ուր յեդեվեն։
1480 Զարդեց օսկոռ, ակոշկեն ջարտեց,
Տեսավ, օր ակոշկի յառջեվեն՝ քաղաք թունդ առեր է, կէրտա։
Ցելա՛վ, յելավ խառվավ ըդոց, գնաց։
Երրորդ անգամն օր բոռաց,
Քեռի Թորոս աշեց, օր ժողովրդի միջեն մե մարդաբոյ մե՝
Ըսավ.— Մեր տղեն էգա՛վ,— ըսավ,

39 Քայլ։

Ու լցեց ձին ու քշեց։
— Ա՛յ տղա,— ասավ,— պադրաստվի՛,— ասավ,—
Գուրզը քուզը՛դ է։
Քցեց. օր քցեց՝ բռնեց։ Բռնեց.
1490 — Հա՛, տղա՛,— ասավ,— քու հերա-հերան ասա՛,
Քու մերա-մերան ասա՛,
Իմ գուրզ աբառաժ քարե՛ր կը ճղեր,
Քըզի բան չէրե՞ց։
Ասավ.— Իմ հերա-հերանին Վաչո՛ն է,
Իմ մերա-մերանին Մարչո՛ն է,—
Ու գոմփ քաշեց։
Օր գոմփ քաշեց, Քեռի Թորոս յընգավ մեռավ։
Բերեցին ջուր լցեցին, պորտ քամեցին, այրղցուցին, յելավ։
— Տո հալվո՛ր,— ասավ,—
1500 Դու գըրզով զարդիր՝ ես բռնեցի,
Բայց ես գոմփ քաշի՝ դու մեռա՛ր։
— Տո՛,— ասավ,— քու գլխուն ու արեվուն մեռնի՛մ,
Ախըր ես քու գոմփից չմեռա,
Ես քու խոսքից մեռա, է՛։
Ախըր քու հերա-հերան Դավի՛թն է,
Քու մերա-մերանին Արմաղա՛նն է, Խանդո՛ւգն է.
Դու Վաչոյի-Մաչոյի ըսիր՝ ես քու խոսքի՛ց մեռա։
Էս էլ,— ասավ,— քու հոխպե՛րն է։
— Իդը իմ հոխպե՞րն է, դու էլ իմ քեռին ի՞ս։
1510 — Հա՛։
— Դը՛, քելե՛ք էրտանք,— ասավ։
Առան Մհերին էգան Սասուն։

Էգան Սասուն, տղեն էղավ մե քանի տարեգան։
Արդեն հերն օր մեռեր էր,
Սուրբ Նշան, զըրխս, թաս, բաներ՝
Բիրադի պայած են.
Ձին էլ պայած են, բոլորովին դուրս չըն թողե։
Էգավ տղեն օր հասավ, վերցին հանձնեցին տղին։
Հանձնեցին տղին, բերեցին օր մի կերուխում էրեցին՝
1520 Հոգեհանգիստ Մհերին, Դավիթին։
Բերին, բրոշ[90] դրեցին, օր նստան խմելու, ասավ.
Քեռի՛,— ասավ,— կը թողի՞ս, էս պղինձ գինին
Խմիմ իմ պարի և իմ հոր հոգեհանգստյան կենաց։
Ասավ.— Լաո՛, էս բրոշով մեգ քու հերն է խմի,
Ասավ,— Հիմի էլ դո՛ւ բդի խմիս,
Խմե՛,— ասավ,— Մհեր շան։
Վերցուց ու դրեց բերնին, խմեց։
Ցռան Վեջոն ասավ.
— Ա՛յ մարդ,— ասավ,— յուր օր ըիջըմ կա,

90 Մեծ կաթսա։

1530 Կը բերին, կէնին Սասունցի Դավիթին տղա,
Անուն էլ կը դնինք Մհեր,
Քառասուն հոգու ըռըխա[91] կը կտրին,
Գրլնան մեգի փոր։
Մհերն օր լսեց, վերուց զարդեց Ցռան Վեջոյին գետին,
Վրեն ղրեց
Հոթոթ, Մոթոթ,
Անուշ Քոթոթ,
Բռնին Ուռի,
Դնին Մռթի,
1540 Սանասար,
Ադնամելիք,
Քեռի Թորոս վրեն սարուբար[92]
Ու յելավ նստավ վրեն։
Ցելավ նստավ վրեն, Քեռին ըսավ.
— Մհեր ջա՛ն,— ըսավ,— ընձի՛ խնայե,
Ախբր չէ՞ ես ծեր իմ։
Ցռան Վեջոն վրեն-մրեն բոզբդեր[93] էր,
Վերցին յօդնեն, թալեցին դուրս,
Տարան, վերջ, լվացին։
1550 Մե դիր մի, երդրորդ, երրորդ դիր էլի խմեցին,
Էլի էդ խոսք ըսեց.— Ցուր օր բիջըմ կա...
— Է՛,— ըսավ,— օր ես էս տան մեջ բիջ իմ,
Ես ի՞նչ դորձ ունիմ էս տան մեջ մնամ։
Ցելավ հեձավ ուր ձին, վերուց ուր զենքեր,
Մհերն՝ պարն, օր դնաց Մսրա Մելիքի քով,
Էդտեղ սամուր քուրքիմ՝ են տվաձ նվեր,
Էդ սամուր ղուրքին էլ վերուց, առավ վրեն,
Հեձավ ուր ձին ու գնաց։
Քջեց գնաց դեբի Բաղդադ։
1560 Բաղդըդու խալիֆին մե չայիր մի կար,
Օր հավքըն վրավով չընցներ,
Մեջ մե յախպուր կար, ծառն էլ վերեվ։
Տեսավ էդ ծառ, յինք էլ, շոգ, դադրուգ[94], ըսավ.
— Քաջիմ ձիս թողիմ իգա կանաչ տեղ, կդոր մի արձի,
Ես էլ ծառի տագ կդոր մի պառգիմ,
Դինջանամ, հրռաթիմ[95], յելնիմ էրտամ։
Բերեց ձին օր տավլեց[96] ըդոր մեջ,
Ցինք էլ էգավ էդ յախպրի վրեն, հաց կերավ, ջուր խմեց,
Առավ սամուր քուրքին վրեն, քնավ։
1570 Առեր էր քուրք վրեն, քնավ,
Մեգ էլ դուրբին դրեց Բաղդըդու խալիֆեն օր՝
Ուր չիմանա չայրի[97] մեջ, ա՛յ մարդ,
Բացի հավք՝ ձի՞ն մեջ կարաձա,

91 Ապրուստ, օրապահիկ։
92 Բարձր, սարին հավասար։ 93 Կեղտոտել։
94 Դագրաձ—հոգնաձ։ 95 Հանգստանալ։ 96 Բաց թողնել։ 97 Կանաչ մարգագետին։

Մարդ 'մ էլ ուրան յախպրի վրեն քներ է։
— Գացե՛ք,— ըսավ,— հըլը բռնե՛ք, բերեք.
Էդ քանի՞ գլխու տեր է, օր էգեր է,
Ձին էլ թողեր է, կարաձա,
Ցինք էլ իմ յախպրի վրեն,
Ծառի տագ քներ է։
1580 Ցելան էգան էրգու-իրեք հոգի։
— Ա՛յ մարդ,— ըսավ,— խարիբ մարդ իմ,
Ձըդիցեր իմ, էրեր իմ։
— Ձէ՛, դու բռնավոր իս,
Քըզի կը տանինք մեր խալիֆեն։
— Ա՛յ մարդ, ընձնից վազ կեցեք, ի՞նչ գուզիք։
Շադ օր խոսաց՝ չէղավ,
Բռնեց էրգսի անգըշներ լե կդրեց։
— Գացե՛ք,— ըսավ,— ձըր խալիֆին ըսեք՝
Թըխ ընդրա թուր կդրե իմ ջեղ։
1590 Գացին, պադմեցին։
Ցելան զորք էրեցին, էգան.
Գալաձ՝ ջարտըվան, գալաձ՝ ջարտըվան,
Իրեք օր կովան, իրեք օր ջարտեց։
Օր ջարտըվան իրեք օր, Բաղդրդու խալիֆեն ըսավ.
— Դու ի՞նչ մարդ իս։
— Ես,— ըսավ,— Սասունցի Դավիթի՛ տղեն իմ։
— Դը՛ լավ,— ըսավ,— օր էդպես ի,
Իմ ախճիգ,— ըսավ,— կիդամ քըզիգ։
Ու առան էգան։
1600 Ձեռ դրեր էր խալիֆի փիջին, որպես փեսա-աներ՝
Մուռդըռեր էր վրեն,
Տարան թալեցին դեն, յիստըգին, էգան։
Էգան, օր բերեցին, ըսավ.
— Ամո՛թ է, օր ես քըզի տանիմ իմ հեգ քաղաք, իմ տուն.
Բդի ըսին՝ գնաց, էսքան ջարտվավ,
Ուրիշի տղա ին, ջարտվան,
Օր դու քու բուղեն բդի բերեր քու տուն,
Էլ մըզի յընչի՞ ջարտեցիր.
Բդի էդի յերես տան ընձի։
1610 Քըզի շադըր կիդանք, հաց, բան,
Մե էրգօր, իրեք օր հոդ արբի,
Մինչի կդորմ՝ լե էս սուգ յընցնի.
Արդեն գիկաս՝ քու նշանաձ քուգդ է։

Բերեցին շադըր տվեցին Մհերին.
Մհեր շադրի մեջ կապրեր։
Ուրանք խորհուրդ էրեցին.
Ախճգա յառեջ մե Ավդալ անվոր մարդըմ կար,
Դա Մհեր տըբին մարդ էր։
Էգավ օր, ըսավ.

1620 — Գոհա՛ր,— ասավ,— էսպես խորհուրդ է էրած.
Գիշեր օր Մհերի լուս յընցավ՝ ճրագ,
Բդի էրտան, Մհերին սրբանին։
Ցիրդուն օր էղավ,
Ախճիգ յելավ հեծավ մե սեվ ձի,
Հակավ սեվ շոր, գնաց։ Գնաց.
— Բարի յիրգո՛ւն։
— Ասսո՛ւ բարին։ Դու ո՞վ իս,— ասավ։
— Ես Գոհարի ախպերն իմ,— ասավ,— մեծ ախպերն իմ,
Էդեր իմ, իմ կռիվ քու հեդ կռիվ է,
1630 Իմ քուր ես չե՛մ տա քըզի։
Ըդոր հեդ կռվան մինչի լուսու դեմ.
Տեսան, օր մեդ-մեգի չ՝հախտեր,
Ախճիգ դառավ էգավ, մդավ ուրանց տուն,
Տղեն էլ պառգավ, քնավ, դինջացավ։
Մեգել օր էլի հեծավ մե կարմիր ձի,
Հակավ կարմիր շոր, գնաց, ասավ.
— Ես էլ օրտանջա[98] ախպերն իմ,— ասավ,—
Իմ քուր ես չեմ տա,— ասավ,—
Իմ կռիվ քու հեդ կռիվ է։
1640 Էլի սկսան կռվել մինչի լուսու դեմ,
Մեդ-մեգի չ՝հախտեց։
Դառավ էգավ ախճիգ ուր դիվան,
Տղեն էլ գնաց, պառգավ, քնավ։
Մնաց. երրորդ օր՝
Ցելավ հեծավ ճերմագ ձի մի,
Ճերմադ շոր հակավ, գնաց։
Գնաց, սկսեցին կռվել,
Կռվան, մինչի լուսցավ։
Օր լուսցավ՝ մեդ-մեդի չ՝հախտին, ասավ.
1650 — Արի՛,— ասավ,— մի բան մի էնինք։
Ասավ.— Ի՞նչ։
Ասավ.— Մադնիք դնինք, որն օր նեդուաղեղ միջից յընցուց,
Հաղթողըն էն էղնի։
Ասավ.— Էնի՛նք։
Բերեցին դրեցին։ Է՛, Մհերի մադնիք կէղնի սելի մի հալըդ[99],
Տարան դրեցին։ Իրեք հադ ախճիգ քցեց,
Իրեք էլ միջից յընցուց։
Ցառաջին տղեն օր քցեց, զարդեց՝ յընգավ։
— Ցա՛,— ասավ,— գլուխդի կդրի՛մ։
1660 — Չէ՛,— ասավ։
Ասավ.— Պայման պայմա՛ն է։
Ասավ.— Այո՛, պայման պայման է.
Իմ յաճկ քու յերեսն էր,

98 Միջնեկ։ 99 Անվաղող։

Ըսի՝ ախպերն օր էսքան սիրուն է,
Քուրն ինչքա՜ն խորոտ կէղնի,
Արի, լընցի՛ յեդեվս։
Ախճիգ լընցրեց յեդեվ, իրեք դիր քցեց՝
Իրեք էլ լընցուց։
Ախճիգ խնդաց ու ձեռ թալեց, փափախ վերուց։
1670 — Տո՛,— ըսավ,— լրսօր իրեք օր դո՞ւ էիր ընձի...
Ըսավ.— Մհեր ջան, լրսօր իրեք օր ես ենք քըզի տանջող.
Ըսավ.— Պայման կար՝ քու լույսն օր լընցներ,
Ցիգեն քըզի ըսպանեն։
— Ի՞նչ էնինք։
Ըսավ.— Ցիրգուն գիկաս իմ քով։
Մնաց յիրգուն.
Ավդալ ախճգա ծառան էր, խրգեց, բերին տարան։
Տարան, վերջապես, կէրտեր-գիկեր։
Սամուր քուրքին մնաց յոդի՝ Գոհարի սենյակ,
1680 Ցինք օր կախեր էր, էդպես էլ մնաց.
Գ'ելներ գիկեր յիրգուն ախճգա քով, կը նստեն, խոսեն,
Զօր գիկեր կէրտեր։
Ըդոք տղի յեդեվեն լրտեսներ կը պդոցըցեն լարերով։
Տղեն օր յոդաց ճանապարհ կէրտեր,
Զենքեր ու Սուրբ Նշան, օր վիզն էր,
Կը բերեր կախեր ձիու խաշից[100],
Քառասուն շաղ ուր շաղերով հեռու կէրտեր,
Մեղք գը համարեր։
Օր մի, հետեվելով, յեդեվ լընգնելով,
1690 Օր գնաց յոդաց ճանապարհի,
Բերեցին Մհերին բդի ըսպանեն՝ մարդիկ մեջ լընգան,
Մհերին բռնեցին։
Մհերին օր բռնեցին, ձին փախավ։
Բերեցին Մհերին բդի ըսպանեն՝ մարդիկ մեջ լընգավ,
Խալիֆի դիվնի մեջ՝ սրախի մեջ, մե մեծ հոր մի կար,
Թալեցին էդ հորու մեջ։
Խորհուրդ էրեցին, օր բերին քար լընան վրեն,
Արճիճ հալին, լընան վրեն, մնա հորու մեջ։
Ծագ է թողած, օրագան գիկան, դ'հարցուն.
1700 — Մհեր, իմա՞լ իս։
Կըսե.—Ցառեջ աստված,
Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,
Ես կա՛մ ու դուք չկա՛ք,
Ինչ օր Բաղդրդու դուրան նոր կռվինք։

Բայց էդտեխ յոթ տուն հայ ջուլյաղ քրիստոնա կային.
Ըդոք լսեցին,

100 Թամքի կեղ։

Բերեցին պառվու մի տվեցին մի խազմեմ'[101] ու ըսին.
— Գը տանիս...
Պառավ դիկա, ձեն կիդա՝ հաց ժողվող պառավ մ' է.
1710 — Մհեր,— կըսե։
Կըսե.— էն ի՞նչ է
— Որոշում կա, օր քու վրեն քար յըլնան էդ հոր,
Արնիճ հալին, յըլնան վրեն, օր դու մեռնիս։
Հորու աջակողման կողմը նորից մի հոր կա,
Էս խազմեն քրդի, էս էլ բամբաղ ու բուրդ,
Էս բուրդ ու բամբաղ գը գարգիս դեմ,
Օր արնիճ չիդա առնե քրդի,
Թե չէ՝ քու վրեն քար գըլնան,
Արնիճ գ'հալին՝ դու կը մեռնիս։
1720 Կառնե խազմեն, կը ծագե, գընցնի էնդեն,
Էդ բուրդ ու բամբաղ գը ղարգե էդ ծագ, կը քոռցու։
Խալիֆեն յառավոդ գ'ելնի, կըսե.
— Որն օր իմ գլուխ կը սիրե,
Մեդ-մեդ քար բերե, թալե գյավուրի վրեն։
Բերեցին քար լիք լցեցին,
Արնիճ հալեցին, լցին վրեն։

Քեռի Թորոս ոըմ աչեց, օր Մհերին բռնած են,
Տեսավ, օր թրի բերան էլի ժանգոդեր է։
— Է՛,— ըսավ,— քաշեք իմ Վեցօղնեն Լագզին,
1730 Տղեն նեղության մեջ է։
Յելավ էդավ Բաղդրդու դեմ, մե տեխ մե,
Ուր յեռեսունին չադըր զարդեց ու կսպասե։
Բայց Ավդալն, օր թալեցին Մհերի վրեն, արնիճ լցեցին,
Էդ մարդ խաբար կը տանե,
Թե՛ Բաղդրդի խալիֆեստանուն կը տանե,
Թե՛ էդ յոթ տուն ջուլյագներին կը տանե,
Թե՛ Քեռուն կը տանե,
Կէրտա հորու վրեն, գ'հարցու.
— Մհեր,— կըսե,— ո՞նց իս։
1740 Կըսե.— Յառեջ աստված,
Ես կա՛մ ու դու չկա՛ք,
Ինչ օր Բաղդրդու դուրան նո՞ր կուվիմ։
Էդ խաբարը կը տանե Քեռի Թորոսին,
Ընդոց էլ կէրտա, կըսե.
— Հա՛, հա՛, գյավուրի ձեն կդրուգ է,
Յրսօր-յէգուց՝ գյավուրի ձեն կը կդրի։
Զին էլ փախավ գնաց մե սարին,
Մի տեղ քոլգալամիշ էղավ[102], ուրին փորեց,
Զօր կէրտեր էդ քոլգեն կը մներ,

101 Խազմա—քլունգ։ 102 Պատսպարվել։

1750 Գիշեր կէրտեր արձեր։
Ուր Սուրբ Նշան, բոլոր, ինչ օր սարք կա՝
Ձիու վրեն էր։
Յոթ տարի մնաց հոբում։
Էդ քրիստոնա շուլյազներ օր մի բերեցին ժողով ըրեցին.
— Ա՛յ մարդ, մենք էստեղ յոթ տուն քրիստոնա ինք,
Մենք չը կըռցանք էդ մարդուն...
Գոնյա խազմա, բան մի տենք,
Մգա քանդելով յինք յելեր էր, հա՛։
Բերեցին տարան հաջաթ տվեցին, թե.
1760 — Մհե՛ր, էլ հնար չկա, դու բդի քանդիս։
Էդ մարդն էլ քանդեց.
Հա՛ լցեց, հա՛ յելավ, հա՛ քանդեց, հա՛ լցվավ։
Էդ պառավն, օր շարունագ ըդոր մոդ կէրտեր-յիգեր,
Էն մեգ օր.— Հա՛,— ըսավ,— իմա՞լ իս։
Ըսավ.— Լա՛վ իմ։
Ըսավ.— Ի՞նչ կիդաս, օր քըզի հորեն հանիմ։
Ըսավ.— Ի՞նչ ունիմ, օր ինչ իդամ,
Յոթ տարի է, շոր էլ չկա վրես, ի՞նչ տամ։
Ըսավ.— Կառնի՞ս իմ ախճգան։
1770 Ըսավ.— Քու ախճգա անուն ի՞նչ է։
Ըսավ.— Ջըղա՛ր է։
— Է,— ըսավ,— չեղավ Գոհար, թըխ էղնի Ջըղար,
Բի տեսնամ։
Գնաց, պառավն էր, ախճիգ բերեց.
Արդեն բանձրցեր է, հորու բերան բացեց,
Ախճիգն օր կզավ վրեն, բդի տեսներ,
Ձեռ թալեց, ախճգան քաշեց հոր,
Քաշեց հոր, կանչեց ուր աստվաձ,
Ոտ դրեց ախճգա վրեն, հարի ախճիգ լըղզավ[103]՝
1780 Յինք ուրին թալեց հորից դուրս։
Պառավ սկսեց բոռբռալ,
Պառվու գլուխ լե կդրեց, թալեց ընդեղ։
Յելավ հորուց դուրս, Ավդալ յըռաստ էգավ։
— Հա՛,— ըսավ,— Ավդալ, յո՞ւր կէրտաս։
Ըսավ.— Ի՞նչ կա, կէրտամ խաբար տանիմ,—
Ըսավ,— հա՛, հա՛, էդ է՝ գյավուրի ձեն կդրելով է,—
Յինք գիցավ, թե էդ Բաղդրդու ժողովրդից է,—
Ձենը կդրելով է։
Մսրա Մելիքն էլ,
1790 Մհերն օր գնաց Մսըր՝ Մեձ Մհեր,
Էդ ժամանակ Մհերից մե տղե 'մ էր էղի,
Ձիուց էլ՝ մի քուռագ։
Ամեք՝ Մհերի հեգ, թոռ կէզնին,
Էնի Մսրա Մելիքի տղեն է,

103 Ճխլվել, ճզմվել։

Էնի՝ Դավիթի տղեն է։
Մսրա Մելիք Գոհարի նշանաձն էր, յուզած են,
Էն էլ էգեր էր ուր նշանած տանելու։
Ախճիգ կայներ էր.
— Քանի Մհերի ձեն կենդանի գիկա,
1800 Քու պես հաղար էզնի՝ ես չըմ առնի։
Ավդալն ընդոց կը տանե, թե՝
— Հա՛, յրսօր-յէդուց ձենը կը կտրի.
Ընդոնց էլ տանե, թե՝
— Կենդանի է, ջուտով դուրս գիկա։
Ցնլավ էնտեխ, պադահավ Մհերին,
Որ ժամանադ օր ըդոնց խաբար բդի տանե,
Ըսավ.— Հա՛, հա՛, գյավուրի ձեն կդրելով է։
Աշեց բոլոր, ըսավ.— Ես Մհեր էղնիմ,
Իմ յառեջ,— ըսավ.— գյավուր ըսի՞ն։
1810 Հրմր՛ բռնեց վիղրն օլրրեց, թալեց հորու մեջ,
Շորեր հակավ ու հասկըցավ, թե ըդոր դերն ի՛նչ է,
Գնաց։

Գնաց ջուլյագներու տուն.
— Հա՛, Ավդալ ջան, ո՞նց է Մհեր։
Ասավ.—Յառեջ հա՛ց՝ յեդեվ հա՛րց։
— Ավդա՛լ ջան,— ըսին,— էդ ինչքա՞ն իս սովածցի,
Օր անոցեր իս, հաց գուղիս։
Բերեց հաց, կերավ։
Յոթ տուն գնաց, յոթ լե ըսավ.
1820 — Յառեջ հա՛ց, յեդեվ հա՛րց։
Յոգուց էգավ, գնաց Քեռի Թորոսի մոդ.
— Հա՛,— ըսավ,— Ավդալ ջան,
Մհերից ի՞նչ խաբար կա։
Ըսավ.— Քեռի ջան, յառեջ հա՛ց յեդեվ հա՛րց։
Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,
Էս ձեռով բրդուջ դրեր իմ Մհերի բերան
Ու էգեր իմ,— ըսավ։
Դառավ էգավ։ Էգավ, գնաց Գոհարի քով։
Յիրգուն գնաց Գոհարի քով,
1830 Տեսավ օր՝ սամուր քուրքին իմալ օր կախեր ը,
Հըմալ կախուդ ը։
— Գոհա՛ր,— ըսավ,— էս վի՞ր քուրքն է։
— Է՛,— ըսավ,— քոռնամ ես,—
Էդի,— ըսավ,— Մհերի քուրքն է։
— Ի՞նչ կէղնի,— ըսավ,— տաս, առնիմ վրեսի։
— Ես իմա՞լ, —ըսավ,— Ավդալ, Մհերի քուրք տամ քըզի։
— Է՛, ի՞նչ կէղնի,— ըսավ,— քուրք է, էլի՛։
— Չէ՛,— ըսավ,— չե՛մ տա։
Շատ օր խնտրավ, ըսավ.

1840 — Ես օր իմ ձեռնով չեմ տա,
Բայց դու օր գուզիս՝ գու յելի, յիճու։
Ես կախեր իմ, իմալ օր յինք կախեր է,
Յինք էլ բդի ուր ձեռնով յիճու։
Յելավ, Մհերն էր, քաշեց քուրք, առավ վրեն։
Կը դառնա, կը քելե՝ Մհերն է,
Օր կը դառնա, կաշե՝ Ավդալն է։
Ըսավ.—յառաջ հաց՝ յեդեվ հարց։
Ի՞նչ խաբար իմ բերի՝
Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,
1850 Յըսօր էս ձեռով բրդուճ դրեր իմ Մհերի բերան, էգեր իմ։
Շադ օր չարչըրեց, էգավ ըսավ.
— Չե՞ս ճանչընա,— ըսավ,— տո՛ւնդ քանդվի,—
Ըսավ,— Ավդալ խուրբան է էղի քըզի՛,
Մհե՛րն իմ, Մհե՛ր։
Ըսավ.— Յելե՞ր իս։
Ըբը.— Հա՛, ձեն չը հանի՛ս,— ըսավ։

Էգավ գնաց Մսրա Մելիքի զորքի մեջ։ Գնաց.
— Հա՛,— ըսավ,— Ավդալ, գյավուրից ի՞նչ խաբար։
— Հա՛, հա՛, հա՛, ձեն կտրեր է.—
1860 Ըսավ,— էս քանի օրս է՝ ձեն կը կդրի։
Տեսավ, օր բերած է զորքին միս է էփած.
— Մելիք աղա՛։
Ըսավ.— Ի՞նչ է։
Ըսավ.— Կը թողի՞ս,— ըսավ,— էս միս ուտիմ,—
Ըսավ,— էդ գյավուրի ձեն կդրե։
— Ավդա՛լ ջան, ի՛նչ կըռնաս օր՝ կե։
Կերավ, օսկոռ լցեց փեշեր ու ըսավ.
— Մե դհոլ ու զուռնե մի զարկ,
Ես յելնիմ խաղամ,— ըսավ։
1870 Բերեցին դհոլ-զուռնա զարկին, յելավ խաղալու.
Օր ցխեց[104]՝ որի գլուխ կոդրավ, որի յաչք յելավ,
Որ մեռավ— յուզի-գյուզի բեյլըսըզ էրեց։
Խառվան յիրար.
— Չէ՛,— ըսավ,— որն օր իմ գլուխ կը սիրե,
Ավդալին,— ըսավ,— ձեռ չիտա։
Յելավ յոգուց էգավ, գնաց ջուլյագների քով։
Գնաց ջուլյագենց տներ,
Յայդնեց ուր ով էղնելը։
Քեռուն յայդնեց, ըսավ.—Իմ ձին յո՞ւր է,
1880 Իմ ձիու տեղ դինա՞ք։
Ըսավ.— Քու ձին մե սարիմ՝ տիրեր է,
Չօր կէրտա քոլգալամիջ կէղնի,
Գիշերն էլ գ ելնի կարձա։

104 Ցրել, նետել, շպրտել։

Ըսավ.— Գացե՛ք, իմ ձին բերե՛ք։
— Մարդ-իսան էդ դեն չը կըռնա էրտա,
Իմա՞լ քու ձին բերինք։
Էդ դեն կդրեր էր յոթ տարի, հավք էլ չէրտա։
Կիդա արախչին[105], կըսե.
— Տարեք իդա իմ արախչին, թալեք,
1890 Տե՛ր, շադ հեռու դացեք.
Էդավ կայնավ արախչուս վրեն՝ կիշանա,
Բռնեք, առեք արեք։
Տվեց էրդու տղին, տարան թալեցին,
Ձին էդավ կայնավ վրեն, հոդոդաց ու կայնավ։
Օր կայնավ, աղեղներ դացին, բռնեցին ձին,
Քաշին, առան էդան։
Ցնլավ տեսավ օր՝ ուր Սուրբ Նշան,
Ուր ամեն բան վրեն է,
Բայց յոթ տարի խոլան-խուսխուն[106] բիրադի փդեր է։
1900 Բերեց խոլան-խուսխուն սարքեց,
Ամեն բան կարեց, պադրաստեց,
Խաբար տվեց Քեռուն.
— Քեռի՛, արդեն ես յելեր իմ,
Քուռդի Ջոլատ լե տաղս է։

Խարար առավ Մսրա Մելիք, թե՝
Մհեր յելեր է։
Ժողովուրդ կայնան.— Ախպե՛ր,— ըսեցին,—
Ուրիշի տղեն, ինչի՞ էդոց համար կռվին.
Օր մե կնդա համար բդի կռվին,
1910 Վիրն օր հարդավոր է՝ թըղ էրդուս էրտան կռվին։
Բերեցին որոշեցին օր՝
Մսրա Մելիքի տղեն ու Մհեր բդի կռվին։
Կռվին. էդան, ըբա ըսավ.
— Արի պայման էնի՛նք,— ըսավ,—
Իրեք թուր ե՛ս քըղի ղարգիմ,
Իրեք՝ դո՛ւ ղար։
— Էնի՛նք։
Էդաձ կայնաձ է։
Քեռի Թորոս արդեն էղեր ը յառաջի Քեռին։
1920 — Սրեն[107] վի՞րն է։
Ըսավ.— Սրեն ի՛մն է,— ըսավ։—
Օր դու էդեր իս, զոռով իմ նշանաձ կառնիս՝
Յառաջի սրեն իմն է։
— Է՛,— ըսավ,— թրխ քըղի էղնի։
Բերեց, Մհերն էր, համբուրեց Սուրբ Նշան, դրեց գլխուն,
Թաս կոռձեց գլխուն, ըսավ.

105 Տղամարդու ասեղնագործ գլխարկ։ 106 Ջիասարք։ 107 Հերթ։

— Քու սրեն է, իրեք թուր դու զար։
Գնաց։ Զարգեց։ Քաշեց թուր, յառաջին զարդեց,
Երդրորդ, երրորդ՝ հազիվ կըռցավ թուր Սուրբ Նշան կդրել։
1930 Թռավ հորեն յելավ, ըսավ.
— Դե արի՛,— ըսավ,— սրեն քումն է։
Օր բդի Մսրա Մելիքին մդրցեն հոր՝ մեր էգավ.
— Մհե՛ր ջան,— ըսավ,—
Իմ ամագ շադ կա քու ջոջ պարու վրեն։
— Թե,— ըսավ,— քու ամագ իմ ջոջ պարու վրեն կա, չկա՝
Ես չը՛մ գինա,
Թուր մի,— ըսավ,— բաշխիմ քըզի,
Թուր մի էլ կը բաշխիմ իմ ասսուն,
Մե թուր մի քու տղին կը զարգիմ,
1940 Քու բախտն է, ինչ կէղնի՝ էղնի*։
Բերեցին մդուցին հոր,
Ինչքան օր փալա՛ն ու ջուլ-բան կար՝
Բերին լցին վրեն,
Ջաղչի քար դրեցին գլխուն։
— Է՛,— ըսավ,— իրեք թուր իմ տղեն զարդեց՝
Ըդրան բան չէղավ,
Էդ էլ էն ասկից է,
Ըդոր մե թուր ի՞նչ բդի էնե։
Էգավ, կանչեց ուր աստվածն,
1950 Հացն ու դինին, Տեր կենդանին,
Ու թուր թալեց։
Թալելուն՝ կդրեց, հորի մեջ յիջավ, ջեղեց,
Էրդու կդոր էրեց,
Մեգ էնդեն յընգավ, մեգ՝ էնդեն։
Ըսավ. —Ցելի՛։
Ժաժ էգավ, տեսավ՝ կդրեր է։
— Ա՛ն,— ըսավ,— քու տղեն էլ քեզի՛։
Բերեցին Գոհարին տվեցին Մհերին։
Հարի էդ ժամանագ կուվու պադրաստություն էր,
1960 Էդ ժամանագ էղան հարսնավոր,
Ցելան վերցրեցին Գոհարին ու առան գնացին։
Քեռի Թորոսի հեգ էգան հասան Սասուն։

Հեքիաթ դառավ Մհերին։
Էլ Քեռի Թորոսին, բաներուն՝ բան չկա։

Մհերն էր, գնաց, իրեն համար մե չադրը մի զարդեց,
Էդ չադրի մեջ կաբրեր։
Աստղիկ Ցոլածին կար, Մհերի յեդեվեն կը պդրդեր։
Դրա նշանաձի անուն Դեղձուն Ծամ էր։

* «Օր կըսին՝ գնաց Մսրը, ֆիլան, ռեֆան, ըդոք մըզի հարդավոր չէ։ Ես ինչպես օր լսեր իմ, ըզոք կը պադմիմ, ըդոք մըզի հարդավոր չին, որովհետև ես ըդոք չեմ լսերիս։ (Ծանոթ. վիպասացի)։

Ասեցին, օր շատ սիրուն է,
Աստղիկ Ցոլածինի պես էլ սիրուն մարդ չկա.
Նա էլ օդապարով կը պդրդվեր։
Դուղեր օր ըդրան բռներ, բայց չը կըռնե։
Ասավ.— Էրտամ, Դեղձուն Ծամին քաշիմ բերիմ,
Բլլքի մի կերպ ձեռ էցքիմ։
Դնաց, Դեղձուն Ծամին բերեց,
Էղան էրդու կնիգ։
Աստղիկ Ցոլածին օդապարով վերեվեն կը պդրդվեր։
Շարունադ թաս գլխուն էցկուգ էր,
Վերևվեն ինչքան օր կը թափեր՝
Թասին բան չը էնե։
Էն մեգ օր էլ շադրի յառեշ կը պդրդեր,
Գոհար տեսավ օր՝ սկսել է յերգընքուց թափել.
Էգավ, կայնավ.— Աստղի՛կ Ցոլածին,— ասավ,—
Իմ շահ-բալաբան Մհերին խնայե՛,— ասավ,—
Ի՞նչ դուղիս՝ կիդամ։
— Հե՛յ վախ, հե՛յ,— ասավ,— ես Մհեր էղնիմ,
Իմ կին յիդա իմ յառեշ, ասե՝
Ինչ դուղիս՝ կիդամ։
Բայց որպես մեղք՝ դերի երկինք նեդ չը քըցե.
Զոքավ ու ասավ.
— Մեղք էլ էղնի՝ Գոհարի վիզ։
Տվեց, օր տվեց, օդապարու տգից զարդեց,
Սրդից, կրունըգից դուրս տվեց։
Մեդ էլ օդապարով էգավ, յիճավ։
Էգավ յիճավ՝ մեռեր է արդեն.
Աշխարքի մեջ էդպես խորոտ մարդ չկար։
Տարան հորեցին։
Էգավ, ասավ.— Դու օր էս էրեցիր,
Էդ քու մե խոսքի համար,— ասավ,—
Յոթը տարի կէրտամ կռատուն կռվիմ,
Յոթ տարուց յեդո նոր դիկամ։
Յելավ դնաց։

Յելավ գնաց։ Մե տարիմ՝- էրգու օր ընցավ,
Օր կարոտցան, բերեցին, ասավ.— Արի՛,— ասավ,—
Զամաշուր՝ շաբիգ-թումբան, դեղինք, խրգինք էրտա,
Օր հակավ, գ՝ հիվանդանա,
Կա՛մ մըզի կը կանչե, կա՛մ յինք գիկա,
Կէրտանք, տեսնինք։
Բերեցին էրգուս էդ մուշավարեն[108] էրեցին,
Զեռք մե շաբիդ-թումբան բերեցին դեղեցին,
Իհարգե, էնպես դեղեցին, օր չըմեռնի,
Օր միան ուրին թուլ բան զդա՝ հիվանդ,

108 Խորհուրդ։

Խրգին գացին։
Ըդոք օր հակավ՝ հիվընդցավ։
Հիվընդցավ մի քանի օր, էգավ։
Էգավ, բերեցին դրեցին շորեր հանեցին,
Լողգրցուցին, լվացին՝ լավցավ։
Օր լավցավ, ըսավ.
— Էս ի՞նչ բան էր,— ըսավ,— էս ջորեր...
2020 Ըսավ.— Մհե՛ր ջան, քըզի օր շադ կարոտցանք,
Մենք էրեցինք, օր յիգեր՝ մեր կարոտ առնենք։
— Լավ,— ըսավ։— Յառավոդ յելավ, ըսավ.— կէրտամ,
Տասնուչորս տարի կէրտամ կռատուն կովիմ,
Տասնուչորս տարին թրմի՝ նոր գիկամ։
Յելավ հեձավ ուր ձին ու գնաց։
Գնաց, գնաց մի գեղ, մի տուն խոնախ էղավ.
Մե կին մ՝ է։
Ցիրգուն խոսացին, ըսավ.— Դու ի՞նչ կէնիս։
Ըբը.— Մհե՛ր ջան, ես էս գեղի նախրջու կինն իմ։
2030 — Մարտդ յո՞ւր է։
Ըսավ.— Մարտ չունիմ։
Ըսավ.— Ջրս առնի՞ ընձի։
Ըսավ.— Կառնի՛մ։
Բերեցին որոշեցին՝ առան յիրար։
Առան յիրար, մե էրգօր մնաց հոդ,
Պայման էր՝ բդի էրտա, կովի կռատուն,
Ըսավ.— Ես կէրտա՛մ,
Տասնուչորս տարի կռատուն կը կովիմ,—
Ըսավ.— Եթե ընձի տղա էղա՞վ,
2040 Էս բաղբանդ[109] կը կարիս թեվ, կը խրգիս յիգա ընձիգ,
Եթե ախճիգ էղավ՝ կծախիս, կը պայիս,
Մինչի ես յիգամ։
Օսյաթ[110] էրեց նախրջու կնդան,
Բաղբանդ տվեց ու յելավ գնաց։
Գնաց։ Գնաց տասչորս տարի կռատուն կովավ։

Խաբար տանք նախրջու կնոջ։
Տղե մի բերեց։
Տարին թրմածդան[111]՝ ուրիշներ տարով մեձընեն,
Էդի օրով մեձըներ։
2050 Արդեն տղեն էղեր է հասունացած տղա.
Վիր հեդ կը կովի, Մհերի սերունդն է,
Ջարգե, կը ջարտե, գիկան, կը բողոքին.
Շատեր լե բիջ կըսին։
Սաղ գեղ բողոքեցին, թե.
—Բիջ բերեր փս, պայեր իս գեղի մեջ։
Էն մեգ օր էգավ, մոր ըսավ.

109 Ապարանչան։ 110 Կտակ, պատգամ, պատվեր։ 111 Լրանալուն պես։

— Քըզի կըսպանի՛մ,— ըսավ,— ես օր բի՛ջ իմ,
Ըրը դու ընձի ընչի՞ չըս ըսի։
— Ա՛յ տղա, ի՞նչ բիջ, ո՞ր կըսե՝ դու բիջ իս։
2060 — Սաղ գեղ ընձի բիջ կըսին։
— Դու Սասունցի Մհերի տղեն իս։
— Ըրը իմ հերն յո՞ւր է,— ըսավ։
— Քու հեր,— ըսավ,— կռատուն գացեր է, կը կռվի։
— Ըբը ես հոս ի՞նչ դորձ ունիմ։
Ելերեց բաղբանդ կաբեց տղի թեվ,
Հակուց, տղեն գնաց։

Տղեն գնաց, Մհերի տասնուչորս տարին թըմեր էր,
Յինք էլ յեգ գիկեր։
Տեսավ օր՝ մե երիգասարդ մի, ճամպու հեգ,
2070 Փեգ ձեռ՝ քարի գը ղարգե, փեգի գը զարգե,
Խաղալեն գիկա։
Օր էդավ, մոդեցավ.
— Ա՛յ տղա,— ըսավ,— ճամպուց դո՛ւրս արի։
Ըսավ.— Դու ո՞րն իս, օր ընձի գը հրամայիս,
Ըսավ,— դո՛ւ դուրս արի ճամպուց։
Շադ օր յիրար չը հասկըցան.
— Հա՛,— ըսավ,— քըզի պայե՝ էգա։
Գուրզ թալեց։ Օր գուրզ թալեց, զարդեց՝
Տղեն յընգավ, մեռավ։
2080 Էգավ տղի վրեն.
— Լա՛վ,— ըսավ,— ընձի օր ըսպանեցիր,
Իմ հոր պադասխան իմա՞լ բդի տաս։
— Տո՛,— ըսավ,— քու հեր ո՞րն է։
Ըսավ.— Իմ հեր Սասունցի Մհե՛րն է։
— Հե՛յ վախ, հե՛յ,— ըսավ,— քու խրգողի լո՛ւսը քոռնա,
Ես իմ ձեռով,— ըսավ,— իմ տղեն սրբանի՞մ...
Ըսավ.— Յո՛ւխտ ու պայման էղնի յառաջի ասսուն,
Էրտամ,— ըսավ,— էդ էրգու կնիգ լե սրբանիմ,
Նախրջու կնիգն էլ սպանիմ,
2090 Յիկամ էրտամ, ըսնամ՝
Յո՞ւր իմ տեխ գ'հասնի...
Գնաց էրգըսին էլ սրբանեց,
Նտխրջու կնգան էլ սրբանեց,
Էգավ հեձավ ձին, էգավ։

Էգավ. մե խայե մի ռաստ էգավ։
— Է՛յ, աստված,— ըսավ,— իմ բազում մեղաց համար,
Ես իմ թուր թալիմ, էս խայեն բացվի,
Ես էրտամ մեջ։
Ու գուրզը ղարգեց։
2100 Ձարդելուն՝ խայեն բացվավ,
Մհերը գնաց էդ խայի մեջ,

Խայի մեջ էլ մնաց։
Մգա, մգա, գրռ ձիու շեռ, օր կը շռե՝
Կաթ-կաթ էն խայից կը թափվի։

Մհերն հըմգա էդ քարի մեջ,
Ուր ձիով կըսպասե՝
Մինչի, թե ո՞ր վախտ բդի բացվի,
Օր նորից յելնի,
2109 Կռապաշտներու հեգ կռվի։

САСНА ЦРЕР

(Новый вариант армянского народного эпоса—к 100-летию со дня первой записи)

С. Б. АРУТЮНЯН
Доктор филологических наук

А. Ш. СААКЯН
Кандидат филологических наук

Резюме

К 100-летию со дня записи и публикации первого варианта армянского народного эпоса «Сасна Церер» (Давид Сасунский) Институт археологии и этнографии АН Арм. ССР в 1971 г. организовал целевую фольклорную экспедицию под руководством доктора фил. наук С. Б. Арутюняна для обнаружения и записи новых вариантов эпоса. В течение 1971—1972 гг. экспедиция обследовала около 150 населенных пунктов Советской Армении, заселенных бывшими переселенцами из Западной Армении и записала 64 новых варианта эпоса.

Один из них—ныне публикуемый вариант, который был записан в августе 1971 г. в селе Ланджик Анийского района Арм. ССР. Сказитель эпоса 82-летний старик Седрак Керопович Абаджян, выходец из деревни Хастур Алашкертского района (Западная Армения), по профессии земледелец и пекарь.

Все до сих пор опубликованные варианты эпоса типологически разделяются на две версии: мушскую и мокскую. Вариант, рассказанный С. Абаджяном, принадлежит к мушской версии эпоса, он содержит все четыре ветви «Сасна Церер», полностью отражает его традиционную сюжетную линию, богат эпическими повествовательными формулами и стихотворными вставками.

Вариант С. Абаджяна типологически принадлежит к той же версии эпоса, к которой принадлежала и первая запись, сделанная Гарегином Срвандзтяном ровно 100 лет назад —в 1873 г. в селе Арнист Мушского вилайета (Западная Армения), опубликованная в Константинополе в 1874 г.